կը քարոզէր, այլ նաև արդեամբք կը ցուցընէր. ամենևին ետ չէր քաշուէր պէտք եղած տեղը նաւաստ աշխատութիւններ յանձն առնուլ, բաւական է որ հասարակաց բարիք մը յուսար անկէց. ընդ հակառակը բարձր բաներէ ալ մէկէն չէր յուսահատեր՝ վստասիրտ, տկարամիտ և թոյլ մարդկներու պէս: Երբոր մեծն Նաբոլէոն Անգղիացւոց տէրութիւնը ջնջելու կը սպառնար, Սինգլէօ հրաման ուզեց խորհրդարանին նախագահէն որ Գէզնէս գաւառէն զօրք ժողվէ, զոր ընդունելով, գնաց մէկէն իր երկիրը և քիչ ատենուան մէջ 600 կտրիճ ժողվեց իր քովը, որոնք կամաց կամաց բազմանալով 1000էն աւելի եղան, և ասոնք ինքնակամ իրենց հայրենեացը, և մասնաւորապէս իրենց Սինգլէօ բարերարին սիրոյն համար, որուն վրայ մեծ համարմունք ունէին, պատրաստուեցան Նաբոլէոնի սպառնալեացը դէմ դնելու:

Իրաւ 1000 մարդ՝ Նաբոլէոնի պէս տիեզերասաստ զօրութեանը դէմ դնելու ոչ ինչ էր, բայց ասով ուրիշ բան չենք կրնար հետևցընել բայց եթէ Սինգլէօին ազդեցութիւնը և իրեն համարմունքը որ ունէր ան ժողովրդեան դիմաց՝ զորոնք իր անխոնջ ջանքովը առաջ քշեց և լուսաւորեց յամենայնի: Նոյն իսկ ան միջոցին, որ այսչափ զինեալ մարդ գլուխը ժողված Ապէրտինի դաշտը՝ իր թշնամւոյն կը սպասէր, միւս կողմանէ իր մէկալ գործողութիւնները անթերի կը կատարէր. վասն զի Ազգային Դրամանոցը՝ որուն նախագահն էր՝ ամենայն արթնութեամբ կը կառավարէր. ոչխարի բրդոյ ընկերութեանը՝ չափէն աւելի հոգ կը տանէր. երկրին մեծամեծ ձկնարանները՝ որոնք դարձեալ ինքը մտուց մէջերնին, հեռուն կեցած տեղէն՝ կարգի կը դնէր. և որ զարմանալին է, ասոնցմէ դուրս ժամանակ կը գտնար նաև զանազան՝ բայց միանգամայն օգտակար գրքեր ալ շարադրելու, որոցմով անունը անմահացուց չէ թէ միայն իր ազգայնոց, այլ և օտարաց առջև, որոնք քիչ շատ ուսումնական կենաց մեծամեծ օգուտները առիթ ունեցեր են ճանչնալու, ևս առաւել որոնք անոնց վրայ կատարեալ գաղափար ունին:

Երբոր Ռուսհ ամերիկացի դեսպանը Անգղիա եկաւ, հարցուց թէ երկրագործութեան վրայ խօսող ամենէն նշանաւոր գիրքը ո՞րն է. պատասխան տուին թէ «Յովհաննէս Սինգլէօինը»: Հարցուց դարձեալ, հապա արքունի մտից վրայ գրող՝ ինչ երևելի մատենագիր կայ. նորէն պատասխան տուին թէ «Յովհաննէս Սինգլէօ»: Ասոնցմէ աւելի՝ իր անունը անմահացնող գործքն է՝ Սկովտիոյ վիճակագրութեան պատմութիւնը 21 հատոր. այնպիսի գործք մը, որուն նմանը մինչև ցայսօր քիչ կը տեսնանք: Այս իրեն երևելի գրուածքը՝ գրեթէ 60 տարուան անընդհատ աշխատութիւն պատճառեց իրեն, որուն միջոցը 20,000 նամակէն աւելի ընդունեցաւ, այս նիւթոյս վերաբերեալ բաներու վրայ: Վերջապէս այս անխոնջ անձը իր կենացը մինչև վերջին կէտը չդադրեցաւ աշխատելէն և օգուտ ընելէն ոչ միայն առանձնական՝ այլ և հասարակաց բարւոյն, օրինակ ըլլալով մասնաւորապէս իր ընտանեացը, ինչպէս նաև բոլոր իրեն հայրենեացը:

ԱՔՍՈՐԱՆՔ

Աքսորանք՝ բաժնիլ հեռանալ մ'է մեր հօրէն, մօրէն, մեր եղբայրներէն, քոյրերէն, բարեկամներէն. խոյս տալ մը այն երկրէն՝ որ զմեզ ծնաւ, այն երկընքէն՝ որ մեր օրօրոցին վրայէն անցուց առաջին արևները. այն հովիտներէն՝ որ վըկայ են մեր առաջին խաղերուն. այն գետերէն՝ որոնց ափանց վրայ մեր առաջին քուներուն համն առինք. ցաւ մ'է զրկման այն բաներու՝ որ կու զմայլեցընեն զերիտասարդ հասակն, և որ կրնան զմայլեցընել բոլոր կեանքը. միայնութիւն մ'է և լքումն, վիշտ մը, և շատ անգամ՝ մահ:

Ո՞վ է որ այնպէս կու լայ դառնութեամբ՝ երբ կը լսէ այն երգերը. — աքսորեալն։ — Օտար երկրի մը մէջ՝ իր հայրենեաց նուագները կու լսէ, կու ճանչնայ։ — Ո՞վ կը պագնէ այնպէս ախորժով այդ ծառերը և ծաղիկները. — աքսորեալն. ճանչցաւ նա հայրենեաց ծառերը և ծաղիկները։ — Ո՞վ է որ գիշերը գաղտագողի կ'անցնի այն ալիքներէն, և պահ մը կու մտնէնայ եղերքին. — աքսորեալն է, որ կ'ուզէ ցամաքը կոխել և շնչել հայրենեաց հովը։

Կը տեսնէք այդ երիտասարդը՝ որ մանակից չըլլար իր չորս կողմը տիրած խաղերուն և հանդէսներուն, և որուն երեսն տժգոյն է և վտիտ. աքսորն է որ կը տանջէ զանիկայ. այն ծերուներին, որուն կերպարանքն այդպէս ցաւագին է. — աքսորն է որ կու մեռցընէ զանիկայ։ Ասոնք հայրենի հողէն փրցուած տունկեր են, և խիստ հովերու և մահաբեր արևներու տակ ձգուած։

Ո՞վ կրնայ տեսնել թշուառ աքսորեալներ կամ լսել առանց դողովելու անոնց ցաւոց պատմութիւնը։ Ո՞վ չը-ղդար իրեն սիրտը տրտմութեամբ սըղմուիլ, և իր աչքերը արտասուաք լցուիլը մինչդեռ արքայազարմ զոհեր կ'երթան փոխանակելու իրենց հայրենեաց բոլոր ուրախութիւնները և փառքերը՝ աքսորանաց ամենայն նեղութեանց և ցածութեանց հետ։

Մ'իայն աքսորանքի անունը լսելով, միայն մտածելով, աշխարհակալք՝ ձեռնին իրենց թագին կու տանին, մայրերն կու սղմեն ծոցերնուն վրայ իրենց զաւակն. արհաւիրք մը կու պատէ զմեզ. և այլ աւելի քաղցր կ'երևնան հայրենիք։ Երկինքն կ'ըսէ մեզի, Ինչպէս լուսաւոր եմ ես. — Օդն. Ես ինչ մաքուր եմ. — Դաշտերն. Մենք ինչ գեղեցիկ ենք։ — Թռչնոց երգոյն մէջ աւելի ներդաշնակութիւն մը կայ, ջրին մէջ աւելի յստակութիւն, ծաղկանց մէջ աւելի անուշահոտութիւն։

Սիրեցեա՛ք առարկայք, դուք էք միանգամայն դառնութիւն և քաղցրութիւն աքսորանաց. եթէ ձեր հեռաւորութիւնն և եթէ հրապոյրքն կ'օրօրեն զմեզ՝ ձեր պատկերաց մէջ։ Ո՛հ, դադրեցուցէք շատ անգամ թշուառներուն արտասուքը, զմայլեցուցէք անոնց միտքը, հանդարտեցուցէք անոնց սիրտը։ Ձեզմով, ձեզմով միայն դեռ կարելի է անոնց տեսակ մը փառք։ Եւ երբ ձեր չնորհալի ցնորքները փարատին, թողուցէք դ,յոյսը. յոյսն՝ որ բալասան ըսպեղանի է ամենայն վիրաց, նեցուկ ամենայն թշուառացելոց։ Ո՛հ. ինքն կու տանի ինչուան այն սիրեցեալ առարկային. — այն առարկայն կու տեսնուի, 'ի ձեռք կը բերուի, և համ կու տայ. երբեմն իրականն անգամ անոր պէս զուարճալի չէ։

Իմ ջանքս էր ծանուցանելու աքսորանաց վիշտերը. բայց աքսորն ամեն տեղ է. ամենքս ալ աքսորեալ ենք։ Թէ և բնակինք այն տեղերը՝ որք տեսան մեր ծնունդը, և ապրինք մեզի սիրելի եղածներուն մէջ, սակայն միշտ հեռու եմք յերկնից որ է մեր ճշմարիտ հայրենիքն. և իրեն հեռաւորութիւնն՝ մեր սրտին մէջ կու թողու պարապութիւն մը՝ զոր բան մը չիկրնար լնուլ, և վերք մը, զոր բան մը չէ կարող բժշկել։ Մօրը համբուրից տակ անգամ տղան անհանգստութիւն մը կ'իմանայ. երիտասարդն՝ առաքինի բարեկամութեան քաղցրութեանցը մէջ անգամ. ծերն՝ պզտի տըղաք փայփայելու ատենն։ Մ'իապետն իսկ կու նուաղի իր գահին վրայ. և իր արքունական գաւազանը կու նմանի այն հեզնական գաւազանին՝ զոր Հրեայք դրին Յիսուսի ձեռքը. իր թագն այլ այն փշէ պսակին՝ որով անոր ճակատը զարդարեցին. և հանդերձ իր ամեն արտաքին զքեղութեամբը, զօրութեամբը, և երջանկութեամբն ալ՝ ինքն պըզտիկ, խեղճ և ցաւագար է։

Ամենքս այլ կու նմանինք Ադամայ՝ երբոր Եդեմէն ելաւ, և երկիրը կարծես թէ կու հեծէր պատժապարտ մարդուն քայլերուն տակ, և կու պատասխանէր առաջին աքսորելոյն հառաչանքներուն։ Այսպէս կու մաշէին Հրէից դերեալ ցեղերն ալ Սիոնը յիշելով։ Բայց

ինչ էին Յորդանանու ափունքն և երկրաւոր Դրախտը։ Շատ տկար նմանութիւնք հայրենեաց. և սակայն եթէ Ադամ այնչափ սաստիկ ցաւ զգաց, եթէ Իսրայելացւոց ցեղերն այնքան առատ արտասուք թափեցին, որչափ աւելի մեզի կու վայլէ արտասուել ու հեծել։

Բոլոր երկիրս աքսորանաց տեղ է, և ամեն դեռ դառն է, դրախտն փափկութեան աներևոյթ եղաւ։ Պէտք է միշտ աչուընիս դարձընենք դէպ յերկինս. ձեռուընիս վերցընենք դէպ յերկինս։ Ո՛վ երկինք, ո՛վ հայրենիք, քաղաք հանդերձեալ և միայն. թեւերս դէպ 'ի քեզ երկնցընելէ՝ հոգնած կ'ինկնան աչուընիս՝ տկարացած անդադար քեզի նայելէն։ Քանի՞ քանի՞ անգամ երկնից հաստատութիւնն երևցաւ ինձի ովկիան մը՝ որ զիս կու բաժնէ քեզմէ. ամպերն այլ՝ կոհակներու նման որ զիս դէպ 'ի քեզ պիտի բերեն. աստղերն՝ լուսափայլ փարոսներու պէս՝ որք պիտի ուղղեն իմ ճամբաս դէպ 'ի քեզ դալու։

Ո՛վ երկինք, ո՛վ հայրենիք։ Ես խընդրեցի արծիւէն իր մանկութիւնը, աղաւնիէն իր թեւերը, դէպ 'ի քու ծոցդ թըռչելու համար։ Ինչու՞ համար իմ աքսորանքս այսչափ երկարեցաւ. իմ հոգիս պանդուխտ մ'է այս աշխարհիս մէջ. հոս չիկրնար գտնել իր գոհութիւնը, իր պիտոյքը, իր փափաքները. կու ձանձրանայ հոս ապրելէն, և միայն իր փափաքածն է մահ։ Իմ ամենէն սիրելիներս զիս թողուցին. քու երանաւէտ ափունքներուդ դիմելու համար. և թողուցին զիս իբրև ճնճղուկ մը միայնակ և ողբագին։ Եւ եթէ դեռ աշխարհիս մէջ կու մնան քանի մը բարեկամներ, երթամ սպասելու անոնց, և աղաչեմ զԱստուած՝ որ կարճեցընէ կամ գտնէ քաղցրացընէ անոնց պանդխտութիւնը. և կանչէ զանոնք օր մը՝ քու ուրախութիւններուդ և քու հանդէսներուդ։

Աւա՜ղ. ինչպէս կրնայ մարդս մոռնալ այդ երկնաւոր հայրենիքը. կամ ինչու՞ այդչափ կու չանայ երկրիս վրայ այլ հայրենիք մը պատրաստելու։ Ինչու՞ համար ինքզինքը կու մատնէ ինչուան դըժոխային աքսորանքի մը. աքսոր զարհուրելի և յետին, առանց միխիթարութեան և յուսոյ։

Ո՛վ երկինք, երկինք, քեզի ըլլայ իմ սիրտս, իմ զգացմունքս. քեզի ըլլան իմ ամեն զօրութիւնս և կեանքս՝ այս ժամանակիս մէջ, որպէս զի բոլորովին քովդ ըլլամ յաւիտենականութեան մէջ։

Թ.

Մարկոս Աւրելիոս Կայսեր խօսակցութիւնն որ ընդառ իր Կոմոդոս զաւակին վարպետներուն.

Ապահով եղիք որ ձեզի հաւնելու համար զձեզ իմ զաւակիս վարպետ ընտրեցի։ Երկու տարի դայեկաց կաթը կերաւ, նոյնչափ ալ մօրը գգուանաց մէջ անցուց. հիմայ պէտք է կրթուելու տամ զինքը։ Փաստինա իր մայրը չուզեր դեռ զինքը թողուլ, կարծելով որ խիստ շուտ է տղան վարպետներու տալ. բայց ես ուշ ալ կը տեսեմ տղաս իր ձեռքին տակէն վերցընելը։ Զարմանք չէ որ կընիկները շատ չմտածեն, ու տղաքը ըզբօսանք սիրեն. բայց խոհեմ մարդը պէտք է անցածին վրայ մտածէ, ներկայն կարգաւորէ, ու գալիքն ալ առաջուց տեսնէ։ Ամեն օր կը յիշեմ ան օրն որ աստուածները տուին ինձի ատ զաւակը. ինչպէս որ աստուածները զինքը ինձի տուին՝ ասանկ ալ ես ձեզի կու տամ զինքը մարդ մահկանացու, որպէս զի դուք ինձի և ես աստուածներուն զինքը իմաստութեամբ անմահացած դարձընենք։ Կ'ուզէք որ ուրիշ բան մըն ալ ըսեմ. աստուածները զինքը մարդ ըրին, ես մարմինը միայն տալով՝ կըրնամ ըսել որ անաստուն մը ըրի զինքը. ձեզի կը մնայ որ զինքը իր համբաւովը աստուածներուն նման ընէք։ Ի՞նչ տըւի ես իրեն, բայց մարմին մահկանացու՝ որ կը մեռնի կը լմընայ. իսկ դուք իրեն իմաստութիւն պիտոր տաք, որ չիմեռնիր, յիշատակը միշտ կը մնայ։